

Հետաքննող լրագրողներ հասարակական կազմակերպությանը

«Ամերիաբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Բանկ/ ողջունում է Ձեր կողմից իրականացված լրատվությունը միակողմանի չլուսաբանելուն ուղղված քայլը, և ի պատասխան Ձեր 31.07.2018թ. և 01.08.2018թ. գրությունների տրամադրում ենք տեղեկություններ այնքանով, որքանով դրանք չեն հանդիսանա երրորդ անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք, որոնք ենթակա են պաշտպանության և կարող են հրապարակվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

1. Առաջարկում ենք ընդհանուր առմամբ դիտարկել հաճախորդի վարկի տեղափոխման հարցը. Բանկի կողմից տարբեր ժամանակներում հայտարարվել են վարկերի տրամադրման մրցակցային և ձեռնտու պայմաններ, որի արդյունքում այլ բանկերից վարկերի տեղափոխման միջոցով ներգարվվել են բազմաթիվ հաճախորդներ: Ուստի, որևէ հաճախորդի ներգրավման նախապատմությունը որպես կանոն պետք է բխի Բանկի հրապարակային առաջարկից և հաճախորդներ ներգրավելու անհրաժեշտությունից:

2. Հաճախորդի պարտավորությունների չկատարման դեպքում, Բանկի դրամային պահանջների բավարարումն իրականացնում է պարտավորությունների ապահովման միջոց՝ գրավ հանդիսացող գույքի դատական կամ արտադատական բռնագանձման կարգով:

Գրավադրված գույքի բռնագանձման արդյունքում, դրա իրացումը կազմակերպվում է հրապարակային սակարկությունների/աճուրդային/ կարգով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից: ՀՀ օրենսդրությունը գրավադրված գույքի աճուրդային վաճառքի դեպքում չի նախատեսում գործով երաշխավորի կամ գույքի նախկին սեփականտիրոջը ծանուցելու գործընթաց՝ ուստի աճուրդ կարգակերպողը նման պարտականություններ չի ունեցել: Բոլոր դեպքերում բռնագանձման ծանուցումը ստացած երաշխավորը տեղեկացված է լինում այդ գործընթացի մասին:

Բանկն օրենսդրական գործընթացներն, այդ թվում՝ հաճախորդի կողմից չկատարված պարտավորությունների արդյունքում գրավադրված գույքերի բռնագանձումները կատարում է օրինաչափության սահմաններում՝ փաստաթղթային հիմքերով՝ առանց պաշտոնատար անձանց միջամտության կամ նրանց հետ քննարկման:

3. Գրավատու-անշարժ գույքի սեփականատիրոջ նկատմամբ Բանկը դատական գործընթաց չի նախաձեռնում, եթե Անշարժ գույքի հրապարակային սակարկությունների միջոցով վաճառքից հետո ստացված գումարն ամբողջությամբ ուղղվում է գույքի գրավով ապահովված պարտավորության համապատասխան մասի մարմանը: Այսպիսով, գրավի առարկայի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելուց հետո երրորդ անձ – գրավատուի պարտավորությունները Բանկի նկատմամբ դադարում են, եթե անգամ դրա արդյունքում հիմնական պարտապանի պարտավորությունն ամբողջությամբ մարված չէ:

4. Բացառում ենք նշված շահերի բախման հնարավորությունը, հետևյալ պատճառաբանություններով՝

- ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից բոլոր գործերը քննվում են կոլեգիալ՝ պալատի դատավորների մեծամասնության և նախագահողի կազմով, որպեսզի բացառվի

հնարավոր շահերի բախման կամ մեկ դատավորի հատուկ կարծիքի ազդեցությունը վերջնական որոշման վրա,

- շահերի բախումը բնութագրվում է որպես մի իրավիճակ, երբ պետական ծառայողի անձնական շահագրգռվածությունը (ուղղակի կամ անուղղակի) ազդում է կամ կարող է ազդել նրա պաշտոնական (ծառայողական) պարտականությունների (լիազորությունների) պատշաճ, օբյեկտիվ և անաչառ իրականացման վրա, և որի դեպքում առաջանում կամ կարող է առաջանալ հակասություն պետական ծառայողի անձնական շահագրգռվածության և իրավունքի այլ սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի միջև: Ավելին, եթե անդրադառնանք ավելի ընդհանրական շահերի բախման հասկացությանը, տրված օրինակ Cambridge Dictionary մեջ առ այն, որ այն հանդիսանում է մի իրավիճակ, որտեղ անձը չի կարող արդար որոշում կայացնել, քանի որ ինքը/իրենք կարող են որևէ կերպ ներգործության ենթարկվել այդ արդյունքով /a situation in which someone cannot make a fair decision because they will be affected by the result/: Ուսումնասիրելով նշված սահմանումները և տեղեկացված լինելով գործի մանրամասներից ակնհայտ է դառնում, որ նշված վեճի առարկա հանդիսացող իրավահարաբերության մասնակից է հանդիսացել Բանկը /մասնավոր իրավաբանական անձը/, այլ ոչ թե Բանկի աշխատակիցը, ոտնահարված են եղել և վերականգնման ենթակա էին Բանկի օրինական շահերն ու իրավունքները: Իսկ Բանկի աշխատակիցն ընդամենը բարեխիղճ կատարել է իր աշխատանքային պարտականություններն, ինչպես այս, այնպես էլ իր պատասխանատվության ներքո գտնվող այլ դատական գործերով: Գտնում ենք, որ հարցադրմանը վերաբերելի համապատասխան դատական ակտը օրինաչափ է, այն բողոքարկման արդյունքում մնացել է ուժի մեջ և չի կարող դիտարկվել որևէ շահերի բախում որոշում կայացնող դատավորներից մեկի մասով՝ զուտ այն հանգամանքով, որ Բանկի շահերը ներկայացնող աշխատակցի հայրը հանդիսանում է ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր,

- Բանկն ունի շահերի բախման քաղաքականություն և վարքագծի կանոններ, համաձայն որի յուրաքանչյուր աշխատակից իր աշխատանքային պարտականությունների կատարումը կշռում է բացառելով շահերի բախումն արտաքին և ներքին հարաբերություններում:

*Ձեր կողմից ներկայացված գրություններով բարձրացված դատական վեճերին վերաբերող բոլոր հարցերի սպառիչ պատասխանները կարող եք ստանալ թիվ ԵԿԴ/0167/02/16, ԵԿԴ/0175/02/16, ԵԱՔԴ/0070/02/15 քաղաքացիական գործերով կայացված և ուժի մեջ մտած դատական ակտերում, որոնք հրապարակային են և զետեղված են datalex.am կայքում: